ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2025 թվականի N 670 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 1392-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության խթանման ծրագրերը հաստատելու մասին» N 1392-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028 թվականների ծրագրի 19-րդ կետում՝

1) 1-ին ենթակետից հանել «կցելով նաև պայմանագիրը և» բառերը.

2) 1-ին ենթակետը «չկատարված պարտավորություններ),» բառերից հետո լրացնել «իսկ Հայաստանի Հանրապետության ներսում կենդանիների ձեռքբերման դեպքում՝ հանրապետությունում բուծված կենդանիների համար տոհմային ծագումը հիմնավորող այլ փաստաթղթեր (բոնիտավորման հրահանգ, բոնիտավորման մատյան),» բառերով.

3) 1-ին ենթակետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա. տոհմային ՄԵԿ-ի ձեռքբերման պայմանագիրը՝ կնքված շահառու դառնալուց ոչ ավելի, քան 2 ամիս առաջ, որում կարող է ամրագրված լինել նաև կանխավճարի չափը,».

4) 4-րդ ենթակետը «փոխհատուցման ենթակա գումարը» բառերից հետո լրացնել «(ներառյալ սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանխավճարը)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է նաև սույն որոշման ուժի մեջ մտնելուց առաջ ծրագրի շրջանակներում ներկայացված այն դիմումների վրա, որոնցով դեռևս որոշում չի կայացվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ